2021, ՆՈՅԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 21 (593)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ամենայն Հայոց Հայրապետի օծման եւ գահակալության 22-րդ տարեդարձի առիթով

Նոյեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պաշտոնավարող եպիսկոպոսները, հայաստանյան թեմական առաջնորդները եւ միաբանության անդամները, Մայր Աթոռի կառույցներում սպասավորող քահանաներն ու պաշտոնեությունն այցելեցին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ շնորհավորելու օծման եւ գահակալության 22-րդ տարեդարձի առթիվ:

Հայոց Եկեղեցու հոգեւոր դասի եւ հավատացյալ ժողովրդի անունից շնորհավորելով Հայոց Հայրապետին՝ եկեղեցականներն ու աշխարհականները մաղթեցին կենաց արեւշատություն ու անսասան հովվապետություն՝ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, ի մխիթարություն բարեպաշտ ժողովրդի եւ ի զորացումն հայրենիքի: Եկեղեցականներն ու աշխարհականներն ուրախությամբ անդրադարձան Նորին Սրբության գահակալության 22 տարվա ընթացքում տարբեր ոլորտներում արձանագրված մեծաթիվ ձեռքբերումներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, երախտագիտություն հայտնելով շնորհավորանքների ու բարի մաղթանքների համար, իր հայրական օրհնությունը բաշխեց ամենքին: Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց իրեն լծակից հոգեւոր դասին՝այս տարիների ընթացքում ազգին եւ եկեղեցուն մատուցվող անսակարկ ծառայության, ինչպես նաեւ արցախյան 44-օրյա պատերազմում դրսեւորած քաջարի ոգու համար՝ հորդորելով անմնացորդ նվիրումով, սիրով, ամուր կամքով ու զորավոր հավատքով շարունակել իրենց սրբազան առաքելությունը հանուն հայրենիքի բարգավաճման եւ հայ ժողովրդի առաջընթացի:

Հայոց Հայրապետը գոհունակությամբ փաստեց նաեւ Մայր Աթոռի պաշտոնեության նվիրյալ ու հավատարիմ ծառայությունը՝ ի նպաստ Հայ Եկեղեցու պայծառացման եւ ազգային-հոգեւոր կյանքի շենացման:

Ավարտին Նորին Սրբությունը մաղթեց ամենքին Աստծու առաջնորդությունն ու օգնականությունն իրենց օրհնյալ ծառայության մեջ:

* * *

Նոյեմբերի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Սուրբ Գայանե վանքում մասնակցեց Պատարագի սրբազան արարողությանը: Պատարագիչն էր Մայր Աթոռի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանը:

Պատարագի ընթացքում Հայ Եկեղեցու հոգեւորականաց ու աշխարհականաց դասի անունից շնորհավորելով Հայոց Հովվապետին՝ օծման եւ գահակալության տարեդարձի առիթով, Մուշեղ սրբազանը նշեց. *«Եվ ահա, տարիներ առաջ Աստված եւ մեր ազգն ընտրեցին նրան, ով հզոր հայրենիքի, հզոր Եկեղեցու եւ հավատավոր հայ ժողովրդի բարօրության մեծ երազն ու տեսիլքը եւ այն իրագործելու տերունավանդ շնորհն ունի: Ով լսեց «Մի՛ երկնչիր, միայն հավատա՛, եւ նա կապրի» պատգամը եւ կյանքով վկայեց, որ չի երկնչում, այլ հավատում է եւ իր հավատքի շնորհիվ ապրեցնում իր խնամքին հանձնված ածուին:*

Երբ փորձում էի մտովի ամփոփել անցած քսաներկու տարվա սքանչելի ծրագրերը, ձեռքբերումներն ու իրագործումները, որոնք Հայոց Հայրապետի իմաստությամբ, տեսլականով ու անձանձրույթ աշխատանքով իրականացել են, մի պահ ընկրկեցի. անդրադարձա, որ դրանք էջեր ու էջեր են, որոնց արժանի գնահատականը պիտի տա անաչառ ժամանակը:

Իսկ մենք, որ բարեբաստիկ առիթն ունենք նրա սաները, հոգեւոր զավակներն ու ժամանակակիցները լինելու, երախտագետ ոգով շնորհավորենք մեր սիրելի Հայրապետին գահակալության եւ օծման 22-րդ տարեդարձի առիթով:

Հրավիրում եմ ամենքիդ, սիրելի՛ հավատացյալներ, որ հընթացս Պատարագի մեր սրտագին աղոթքներն ուղղենք առ Աստված եւ մեր բարեմաղթանքները խառնենք հանուր հայության աղոթքներին՝ Հայրապետական մաղթանքով զորություն, զորակցություն եւ անսասանություն հայցելով Հայոց Հորը եւ նրա խնամքին հանձնված Հայոց Հայրապետությանը:

Վեհափա՛ռ Տեր, բոլորիս աղոթքն է, որ Աստված լսի ամեն հայի սրտից բխած ձայնը եւ երկար կյանք ու երկար օրեր տա Հայոց Հորը: Թող Ձեր առաքելությամբ Աստված շարունակի օրհնել ամենքիս այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն»:

Սուրբ Պատարագի ավարտին Հայոց Հայրապետի օծման եւ գահակալության 22-րդ տարեդարձի առիթով կատարվեց Հայրապետական մաղթանք: Սրբազան արարողությունը հանդիսապետեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Ներկա եկեղեցականաց դասն ու հավատավոր ժողովուրդն աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ Ամենայն Հայոց Հայրապետության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու պայծառության, ինչպես նաեւ Նորին Սրբության քաջառողջության, կենաց արեւշատության եւ բազմամյա գահակալության համար:

Հայաստանյան եպիսկոպոսաց եւ թեմական առաջնորդների ժողովը հանդես եկավ հայտարարությամբ

Հոկտեմբերի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց հայաստանյան եպիսկոպոսների եւ թեմական առաջնորդների ժողով, որի ընթացքում քննարկվեցին հոգեւոր-ազգային, եկեղեցական, հովվական եւ ներքին կազմակերպական մի շարք հարցեր:

Առանձին քննարկման նյութ դարձան 44-օրյա պատերազմի հետեւանքների հաղթահարման ուղղությամբ Հայ Եկեղեցու կողմից իրականացվող հոգեւոր-խնամատարական գործունեությունը, ռազմագերիների վերադարձման, անհայտ կորածների հայտնաբերման խնդիրները, զոհվածների աճյունների նույնականացման եւ հուղարկավորության հետ առնչվող հարցերը:

Անդրադարձ եղավ նաեւ ՀՀ ազգային ժողովի կողմից «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների վերաբերյալ նախաձեռնված փոփոխություններին: Այս կապակցությամբ ժողովն արձանագրեց.

«Կարեւորում ենք պետական տոնացույցում ազգային, հոգեւոր ու պետական տոների եւ հիշատակի օրերի պատշաճ ներկայացվածությունը, քանզի մեր հոգեւոր ու մշակութային արժեքները, ազգային դիմագիծն ու ձգտումները արտահայտվում են նաեւ տոների եւ հիշատակի օրերի խորհուրդներում:

Հատկանշական է, որ շատ երկրներում, որոնց թվում՝ Ավստրիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ռումինիան, Լեհաստանը, Լիտվան եւ հարեւան Վրաստանը, պետական ոչ աշխատանքային օրերի գերակշռող մասը (60–80%)՝ եկեղեցական տոներ են: Մինչդեռ քրիստոնեությունն իբրեւ պետական կրոն առաջինն ընդունած Հայաստանում միայն 19%-ն է եկեղեցական:

Այսու դիմում ենք Ազգային ժողովի խմբակցություններին՝ Ամանորի ու Սուրբ Ծննդյան տոների ոչ աշխատանքային օրեր պահպանել նաեւ հունվարի 5-ը՝ որպես Սուրբ Ծննդյան Ճրագալույցի տոնական օր, եւ հունվարի 7-ը՝ որպես մեռելոց հիշատակի օր, հատկապես երբ արցախյան պատերազմի զոհերի ցավը դեռ մորմոքում է մեր ժողովրդի սրտում:

Լիահույս ենք, որ ընդառաջ մեր ժողովրդի բարեպաշտ զգացումներին եւ աղոթքի ու մխիթարության հոգեւոր կարիքներին՝ Ազգային ժողովի կողմից նկատի կառնվի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սույն առաջարկը»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Ալեքսանդր Սերգեեւին եւ նրա գլխավորած պատվիրակությանը

Նոյեմբերի 4-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Ալեքսանդր Սերգեեւին եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանի եւ հայ ակադեմիկոսների:

Ակադեմիկոս Սերգեեւն իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ջերմ ընդունելության համար եւ ընդգծեց, որ մեծ պատիվ է առաջին անգամ Հայաստան այցելության շրջանակներում լինել հայ ժողովրդի հոգեւոր կենտրոնում: Հանդիպմանն Ալեքսանդր Սերգեեւը խոսեց ՀՀ ԳԱԱ-ի եւ ՌԳԱ-ի միջեւ առկա համագործակցային մթնոլորտի եւ ապագա հեռանկարների մասին: Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով հյուրերին, իր ուրախությունը հայտնեց, որ խորհրդային տարիներից առկա փոխգործակցության ոգին նոր շունչ եւ թափ է ստանում՝ նպաստելով ժամանակակից մարտահրավերների դիմագրավմանը: Անդրադառնալով գիտության զարգացման հրամայականին՝ Նորին Սրբությունը կարեւորեց երիտասարդ գիտնականների քաջալերումը՝ գիտության ոլորտում նորանոր ձեռքբերումներ արձանագրելու համար:

Անդրադարձ կատարելով Հայ Եկեղեցու եւ ՀՀ ԳԱԱ-ի գործակցությանը՝ Վեհափառ Հայրապետը փաստեց, որ գիտության զարգացումը մշտապես եղել է Եկեղեցու ուշադրության եւ հովանավորության ներքո:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Նոյեմբերի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, սկսվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը՝ ընդլայնված կազմով:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ ԳՀԽ-ի անդամներն աղոթեցին 44-օրյա պատերազմի ընթացքում նահատակված հայորդիների եւ նորոգ հանգուցյալ Մաղաքիա վրդ. Ամիրյանի հոգիների հանգստության համար:

Այնուհետեւ Գերագույն հոգեւոր խորհրդի հոգեւորական եւ աշխարհական անդամներին իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը հայցեց, որ Տերն առաջնորդի ժողովանը, քանզի մեր հոգեւոր ու մշակութային արժեքները, ազգային դիմագիծն ու ձգտումները արտահայտվում են նաեւ տոների եւ հիշատակի օրերի խորհուրդներում:

Հատկանշական է, որ շատ երկրներում, որոնց թվում՝ Ավստրիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ռումինիան, Լեհաստանը, Լիտվան եւ հարեւան Վրաստանը, պետական ոչ աշխատանքային օրերի գերակշռող մասը (60–80%)՝ եկեղեցական տոներ են: Մինչդեռ քրիստոնեությունն իբրեւ պետական կրոն առաջինն ընդունած Հայաստանում միայն 19%-ն է եկեղեցական:

Այսու դիմում ենք Ազգային ժողովի խմբակցություններին՝ Ամանորի ու Սուրբ Ծննդյան տոների ոչ աշխատանքային օրեր պահպանել նաեւ հունվարի 5-ը՝ որպես Սուրբ Ծննդյան Ճրագալույցի տոնական օր, եւ հունվարի 7-ը՝ որպես մեռելոց հիշատակի օր, հատկապես երբ արցախյան պատերազմի զոհերի ցավը դեռ մորմոքում է մեր ժողովրդի սրտում:

Լիահույս ենք, որ ընդառաջ մեր ժողովրդի բարեպաշտ զգացումներին եւ աղոթքի ու մխիթարության հոգեւոր կարիքներին՝ Ազգային ժողովի կողմից նկատի կառնվի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սույն առաջարկը»:

Հնգօրյա ժողովի ընթացքում քննարկվեցին ազգային, եկեղեցավարչական, իրավական, կանոնական, կարգապահական եւ եկեղեցու առաքելության արդյունավորմանն առնչված հարցեր: Քննարկման առարկա դարձան արցախյան պատերազմի հետեւանքները եւ դրանց հաղթահարման ուղղությամբ իրականացվող ծրագրերը, ինչպես նաեւ հետպատերազմյա եւ համաճարակային պայմաններում եկեղեցու առաքելությունը:

Օրակարգում ընդգրկված էին նաեւ Նվիրապետական Աթոռների, թեմերի, հայրապետական պատվիրակությունների գործունեությանն առնչվող հարցեր:

Հոգեհանգստյան կարգ՝ 44-օրյա պատերազմում զոհված քաջորդիների համար

Նոյեմբերի 9-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Գայանե վանքում տեղի ունեցավ հոգեհանգստյան կարգ՝ արցախյան 44-օրյա պատերազմում զոհված հայրենյաց պաշտպանների հոգիների խաղաղության համար:

Սրբազան արարողությանը ներկա էին Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ:

Մինչ հոգեհանգստյան արարողությունը Մայր Աթոռի վանական խորհրդի ատենապետ եւ լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանը հրավիրեց եկեղեցականաց դասին եւ ներկա հավատացյալ ժողովրդին աղոթք բարձրացնելու նահատակված քաջորդիների հոգիների հանգստության համար:

Արարողության ավարտին նոյեմբերի 9-ի առիթով Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքն ուղղեց ներկաներին եւ համայն ժողովրդին.

«Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Անցյալ տարի հայրենական մեր կյանքը փոթորկվեց ու ցնցվեց Թուրքիայի աջակցությամբ եւ ահաբեկչական խմբավորումների

ներգրավմամբ Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված լայնամասշտաբ պատերազմի ողբերգական իրադարձություններով: Մեր բազում զավակների նահատակման, հայրենիքի զգալի մասի կորստի եւ հետպատերազմյան շրջանում նոր զոհերի ծանր ու վշտագին ցավը շարունակում է մորմոքել մեր ժողովրդի սիրտը:

Մեկ տարի առաջ այս օրը՝ նոյեմբերի 9-ին, միջազգային հանրության եւ ի մասնավորի Ռուսաստանի Դաշնության իշխանությունների ջանքերով հնարավոր եղավ կասեցնել ադրբեջանական ագրեսիան, որի հետեւանքներն անվտանգության, տնտեսական եւ սոցիալական խնդիրների լրջագույն մարտահրավերներ են ստեղծել մեր երկրի եւ ժողովրդի համար:

Մեր դեմ ծառացած հիմնախնդիրների լուծման ճանապարհը մեզ պատուհասած վշտի ու հուսախաբության թոթափումն է: Մեր սրբազան պարտքն է ծանրագույն այս փորձությունները դիմագրավել արժանապատվությամբ՝ հաստատուն պահելով մեր ժողովրդի զավակների սերն ու նվիրումը հայրենիքի, հոգեւոր ու ազգային արժեքների նկատմամբ, նպաստելով Հայաստանի ու Արցախի առաջընթացին, զորացնելով աշխարհասփյուռ մեր ժողովրդի միասնականության նախանձախնդրությունը: Ներկա բարդագույն իրավիճակը հրամայականն է բերում մեր ժողովրդի բոլոր զավակներին, իշխանություններին, հասարակական-քաղաքական կառույցներին՝ միաբանվել ազգային-պետական գերագույն շահերի շուրջ, ձեւավորել ներազգային համերաշխության եւ վստահության առողջ մթնոլորտ՝ հանձնառու գործակցությամբ եւ երկխոսության ճանապարհով հետամուտ լինելու երկրի առջեւ հառնած մարտահրավերների բարվոք լուծմանը:

➥ էջ 3

Հոգեհանգստյան կարգ՝ 44-օրյա պատերազմում զոհված քաջորդիների համար

↩ էջ 2

Այդպես միայն մենք կարող ենք ուղղել մեր կորացած մեջքը, ցավը վերափոխել ուժի, հայրենաշեն նախաձեռնություններ ու ծրագրեր իրագործելով՝ պահպանել մեր ազգի կենսունակությունը, հայրենիքում արժանապատիվ կյանքի պայմաններ ստեղծելով՝ խրախուսել որդեծնությունը, կանխել արտագաղթը, զորացյալ ու կենսունակ պահել Սփյուռքը, վերազարթոնք բերել մեր պետությանը՝ համատեղ ջանքեր ներդնելով տնտեսության, գիտության, կրթության ու մշակույթի զարգացման գործում:

Մեր Սուրբ Եկեղեցին ամենօրյա իր փրկարար առաքելության մեջ շարունակելու է Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքի համայնքներում զորացնել հայորդյաց հավատն ու ապագայահայաց լավատեսական ոգին, սերն ու նվիրումը առ հայրենին՝ աշխարհասփյուռ թեմերով ու բարեպաշտ իր զավակներով նաեւ զորակցություն բերելով մեր երկրի վերքերի ամոքմանը, առկա ճգնաժամի հաղթահարմանը, ներհասարակական կյանքում խաղաղության եւ եղբայրսիրության զորացմանը: «Հետամուտ լինենք խաղաղության եւ շինության՝ միմյանց հանդեպ»,– պատգամում է առաքյալը (Հռ. 14.19): Հիրավի, հայրենական անդաստանում հաստատուն կլինի խաղաղությունը, եւ արդյունավոր՝ ջանքերը լուսավոր գալիքի կերտման, երբ ազգային կյանքից մերժվեն ատելությունն ու անհանդուրժողականությունը:

Այսօր համայն հայության հոգեւոր կենտրոն Սուրբ Էջմիածնից Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների, Մայր Աթոռի միաբանության, հավատավոր մեր ժողովրդի հետ միասնաբար աղոթք ենք բարձրացնում Հայաստան, Արցախ մեր հայրենիքի խաղաղության ու անսասանության համար: Աղոթում ենք առ բարձրյալ Տերը՝ հանուն հայրենյաց պաշտպանության զոհված քաջորդիների համար, որ ողորմածն Աստված երկնային երանական հարկերում հանգստություն պարգեւի նրանց հոգիներին եւ մխիթարություն՝ սգավոր ընտանիքներին, շուտափույթ վերադարձ գերյալներին եւ անհայտ կորածներին: Հայցում ենք Տիրոջ օգնականությունն ու Սուրբ Աջի հովանին հայրենաբնակ եւ աշխարհասփյուռ Մեր զավակներին:

Թող Տիրոջ շնորհն ու օրհնությունը լինեն մեր երկրի ու մեր ժողովրդի հետ, այժմ եւ հավիտյանս. ամեն»:

Անձնական ազատությունը դեմ է համադրվի հանրային դատախանատվության հետ

Գերագույն հոգեւոր խորհուրդը, քննարկելով Հայաստանում համավարակային իրավիճակը, խոր մտահոգությամբ եւ ցավով արձանագրեց վարակվածության ցուցանիշների եւ դրանով պայմանավորված մահացության թվերի աճը:

Գերագույն հոգեւոր խորհուրդը վերահաստատեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքորոշումն առ այն, որ կորոնավիրուսի դեմ պատվաստումը հոգեւոր վտանգ չի ներկայացնում: Կարեւորվեց, որ համավարակի ներկա պայմաններում անձնական ազատությունը խստորեն համադրվի հանրային պատասխանատվության հետ՝ չվտանգելու համար սեփական եւ այլոց կյանքերը:

Բարձր գնահատանքով անդրադարձ կատարվեց բժիշկների եւ բուժաշխատողների՝ մարդկային կյանքեր փրկելու նվիրյալ ծառայությանը:

Գերագույն հոգեւոր խորհուրդն անհրաժեշտ համարեց նաեւ, որ առողջապահության ոլորտի պատկան մարմինները միջոցներ ձեռնարկեն պատվաստման օգտակարության եւ հետեւանքների վերաբերյալ հակասական տեղեկությունների տարածումը կանխելու ուղղությամբ՝ համավարակի դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ժողովի կողմից վերստին կոչ ուղղվեց՝ պահպանել կանխարգելիչ բոլոր միջոցները համավարակի հաղթահարման համար:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Բաբկեն վրդ. Սալբիյանը սույն թվականի նոյեմբերի 1-ից ծառայության է կոչվել Գեղարքունյաց թեմում:

Սահակ քհն. Սահակյանը, ավարտելով իր ուսումնառությունը Գերմանիայում, սույն թվականի նոյեմբերի 1-ից ծառայության է կոչվել Արագածոտնի թեմում:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Առաջնորդություն Հայոց Գերմանիոյ

Թեմական-պատգամաւորական ժողով եւ թեմական մարմիններու ընտրութիւն

Կիրակի՝ 31 հոկտեմբեր 2021, առաջնորդարանի յարկին ներքոյ ի Քէօլն, տեղի ունեցաւ Գերմանիոյ հայոց թեմի թեմական-պատգամաւորական հերթական ժողովը (ԹՊԺ)՝ նախագահութեամբ թեմի առաջնորդ Սերովբէ եպս Իսախանեանի եւ ատենապետութեամբ տոքթ. Խաչիկ Կազէրի: Ժողովին ներկայ գտնուեցան թեմական 16 համայնքներու վարչութեանց ատենապետներ, ընտրեալ պատգամաւորներ, թեմի հոգեւորականաց դասը՝ շուրջ 55 անձ, որոնցմէ 44-ը քուէի իրաւունքով:

Առաջնորդ սրբազան հոր բացման աղօթքէն ետք, ԹՊԺ-ի դիւանի ատենապետ տոքթ. Խաչիկ Կազէր ողջոյնի խօսքով մը կատարեց ժողովին բացումը, որուն ընթացքին ընդգծեց, որ վերջին երկու տարիներու ընթացքին մեր կեանքն ու գործունէութիւնը շարունակուեցան երկու կարեւոր իրադարձութիւններու լոյսին ներքոյ՝ թագաժառիր համավարակ եւ արցախեան 44-օրեայ պատերազմ: Երկու իրադարձութիւններ, որոնք բնականօրէն (մանաւանդ արցախեան պատերազմն ու անոր տխուր հետեւանքները) ծանր ազդեցութիւն գործեցին եւ կը շարունակեն գործել ողջ հայութեան եւ նաեւ գերմանահայութեան վրայ: Ան նշեց, որ ժողովական նիստերու ընթացքին անդրադարձ կը կատարուի այս եւ այլ հարցերու, եւ կը տրուին թեմական գործունէութեան վերաբերեալ անհրաժեշտ տեղեկութիւններ եւ բացատրութիւններ:

ԹՊԺ-ի Ա նիստի օրակարգին վրայ էին թեմական գործունէութեան տեղեկագրութիւնը եւ նիւթական հաշուետուութիւնը, թեմական եւ համայնքային զանազան հարցեր: 2019 եւ 2020 թթ. տեղեկագրութիւնները ներկայացուեցան տեսանիւթերու եւ լուսանկարներու միջոցաւ, որոնց վերաբերեալ յաւելեալ տեղեկութիւններ փոխանցուեցան առաջնորդ սրբազանին, ԹԽ-ի ատենապետ Սերովբէ Օտապաշեանին եւ ԹՊԺ-ի դիւանին ատենապետ տոքթ. Խաչիկ Կազէրին կողմէ:

Անհրաժեշտ մանրամասնութեամբ ներկայացուեցաւ նաեւ առաջնորդարանի 2019 եւ 2020 թթ. նիւթական հաշուետուութիւնը:

Մանրամասն ներկայացուեցաւ արցախեան պատերազմի օրերուն եւ հետագայ ժամանակաշրջանի ընթացքին թեմի եւ առաջնորդական համայնքներու գործունէութեան, դրամահաւաքներու, բողոքի ցոյցերու եւ յուշապահակներու, մամուլի ասուլիսներու, պետական եւ եկեղեցական զանազան շրջանակներուն գրուած նամակներու եւ հանդիպումներու մասին: Նշուեցաւ, որ թեմի եւ իր համայնքներու կողմէ որպէս մարդասիրական օժանդակութիւն հանգանակուած եւ Հայաստան առաքուած է շուրջ կէս միլիոն եւրօ գումար, ինչպէս նաեւ շուրջ 150 խորանարդ մետր տաք հագուստ, դեղորայք, բժշկական սարքաւորումներ, մաքրակենցաղութեան, անկողնային եւ հիւանդանոցային պարագաներ եւ այլն:

Պատերազմի աւարտէն ետք թեմի եւ համայնքներու հանգանակուած գումարներով իրականացուած է շուրջ 100 հազար եւրոյի բարեգործական այլեւայլ ծրագրեր՝ Արցախէն տեղահանուած եւ Հայաստանի մէջ ժամանակաւորապէս ապաստանած ընտանիքներու համար, ինչպէս նաեւ բուն Արցախի մէջ: Առաջնորդորանի բարեգործական-մարդասիրական ծրագրերու իրականացման ընթացքին հետեւելու համար առաջնորդ Սերովբէ սրբազան 2021 թ. ընթացքին երիցս այցելած է Արցախ եւ տեղւոյն վրայ պատասխանատու անձերուն հետ քննարկած է այդ ծրագրերու իրագործումը եւ հետեւած անոնց իրականացման: Բարեգործական կարգ մը ծրագրեր դեռ ընթացքին մէջ են:

Ժողովականներուն տեղեկութիւններ տրուեցան նաեւ Քէօլնի առաջնորդանիստ Ս. Սահակ – Ս. Մեսրոպ եւ Կէօփինկէնի Ս. Խաչ եկեղեցիներու հիմնանորոգման նախապատրաստական աշխատանքներու մասին, որոնք ներկայացուեցան առաջնորդ սրբազանին Տիրատուր քհնյ. Սարտարեանին կողմէ: Վերջինս ներկաներուն ներկայացուց նաեւ թեմին նոր կայքէջը եւ այդ առնչութեամբ տուաւ անհրաժեշտ բացատրութիւններ: Իսկ Գնել քհնյ. Գաբրիէլեան տեղեկացուց թեմի երիտասարդական աշխատանքներու մասին:

Բ նիստի օրակարգը կը ներառէր թեմական մարմիններու ընտրութիւնները: Տեղի ունեցան փակ, գաղտնի քուէարկութիւններ, որոնց արդիւնքով կազմուեցան թեմական նոր մարմինները՝ ըստ հետեւեալի.

Թեմական-պատգամաւորական ժողովի դիւան

Փրոֆ. տոքթ. Խաչիկ Կազէր – ատենապետ, Տիրատուր քհնյ. Սարտարեան – փոխատենապետ, տոքթ. Մարգարիտ Ասոյեան-Լինք – ատենադպրուհի, Լեւոն Դանոյեան – փոխատենադպիր:

Թեմական խորհուրդ

Սօսի Ալթըպարմաքեան-Շայէր, Շաքէ Զեյնալեան, Անահիտ Թուրանօղլու, Աւետիս Կարինեան, Օրհան Պարլըք, տոքթ. Ռաֆֆի Պետիկեան, Արթին Սիմոնեան, Հիլտա Տեղիրմէնճի:

Հաշուեքննիչ մարմին

Ուիլիամ Աբրահամեան, ժենիկ Չաթակ-Մինասեան:

ԹՊԺ-ի նիստերն աւարտեցան Սերովբէ եպս Իսախանեանի օրհնութեան խօսքով, որուն ընթացքին սրբազանը շնորհակալութիւն յայտնեց թեմական մարմիններու նախորդ տարիներու անդամներուն եւ շնորհաւորեց նորընտիր անդամները, որուն յաջորդեցին Պահպանիչ եւ միասնական արտասանուած Տէրունական աղօթքները:

Դիւան առաջնորդարանի

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄԻ՝ 1830–1918 ԹԹ. ՀՈԳԵՒՈՐ-ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԴԱՐՁՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



XVII–XVIII դդ. մեծացել էր հայերի հոսքը դեպի Ռուսաստան, ինչն էլ նպաստել էր հայկական գաղութների աշխարհագրության ընդլայնմանը, գաղութահայության թվաքանակի աճին, ինչպես նաեւ գաղութների տնտեսական զարգացմանն ու ստվարացմանը, ազգային-ազատագրական գաղափարների տարածմանն ու Հայաստանի ազատագրության ուղղությամբ գործնական քայլերի ձեռնարկմանը:

Ռուսահայերի կյանքում կարեւոր դեր է ունեցել Եկեղեցին:

1717 թ. կազմավորվեց Ռուսաստանի բոլոր հայերին միավորող Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Աստրախանի թեմը: Հայկական եկեղեցիներ ու դպրոցներ գործեցին հայաշատ գրեթե բոլոր բնակավայրերում:

1812 թ., երբ Բեսարաբիան միացավ Ռուսաստանին, կեցության ու գործունեության համար նպաստավոր պայմանների շնորհիվ ավելացավ ոչ միայն հայ բնակչության, այլեւ հայկական եկեղեցիների թիվը: Ռուսական կայսրության տարածքում ձեւավորվեց ՀԱԵ-ի երկրորդ՝ Բեսարաբիայի թեմը, որը միավորում էր Բեսարաբիայի, Մոլդավիայի, Ղրիմի, Ռուսաստանի հարավային շրջանների, Մոսկվայի ու Սանկտ Պետերբուրգի ծխերը: Թեմի առաջնորդարանը գտնվում էր Քիշնեւի Սուրբ Աստվածածին եկեղեցում: Բեսարաբիայի թեմի առաջին թեմական առաջնորդն էր (1812–1827 թթ.) Գրիգոր արք. Զաքարյանը:

Ռուսաստանին միանալու նախօրեին՝ 1812 թ., Բեսարաբիայում հայերի թիվն ընդամենը երկու հազար էր, 1830 թ.՝ արդեն 2850, իսկ 1889 թ.՝ 3849: Արեւմտյան Մոլդավիայում, 1857 թ. տվյալներով, ապրում էր շուրջ յոթ հազար հայ: Հայ բնակչության թիվը նկատելիորեն աճում էր հատկապես Բեսարաբիայի խոշոր քաղաքներում: Հայկական գաղութները երկրամասի տնտեսական ու մշակութային կարեւորագույն կենտրոններից էին: Տնտեսական եւ մշակութային կյանքի բարենպաստ պայմանները խթանել էին Բեսարաբիայի հայ բնակչության անընդհատ աճը՝ ընդհուպ մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմը եւ Բեսարաբիայի միացումը Ռումինիային (1918 թ.):

1812 թվականից, երբ Քիշնեւը Բեսարաբիայի կազմում անցել է Ռուսաստանին, այն մոտ մեկ դար եղել է Բեսարաբիայի հայերի տնտեսական, քաղաքական, հոգեւոր եւ մշակութային կենտրոնը: 1803–1804 թթ. կառուցվել է Քիշնեւի Սուրբ Աստվածածին եկեղեցին (1870–1885 թթ. եւ 1976–1982 թթ. վերանորոգվել է), իսկ 1812 թ. Քիշնեւում հաստատվել է Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդությունը: Թեմի եկեղեցիներին կից հիմնվել են ծխական նոր դպրոցներ:

1809 թ. Քիշնեւում ապրել է 560, 1841 թ.՝ 700, 1861 թ.՝ 1082, իսկ 1919 թ.՝ 1000 հայ:

1829–1830 թթ. Բեսարաբիայի թեմը, նորանշանակ թեմական առաջնորդ Ներսես արք. Աշտարակեցու (1843–1857 թթ.՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս) միջնորդությամբ վերակազմավորվեց որպես Նախիջեւան-Բեսարաբիայի թեմ՝ միավորելով Արեւմտյան եւ Հարավարեւմտյան Ռուսաստանի, Նոր Նախիջեւանի, Ղրիմի, Բեսարաբիայի, Նովոռուսիայի ծխերը:

Ներսես արք. Աշտարակեցու եռանդուն գործունեության շնորհիվ ավելացան թեմի եկամուտները, կառուցվեցին նոր եկեղեցիներ, բացվեցին ծխական նոր դպրոցներ: 1835 թ. թեմի տարածքում գործում էին 35 եկեղեցի, 11 ծխական դպրոց, մեկ հոգեւոր ճեմարան:

Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի հոգեւոր-լուսավորական գործունեությունն ավելի է ընդլայնվել է XIX դ. 2-րդ կեսին եւ XX դ. սկզբին: Այդ ժամանակաշրջանի առավել հայտնի թեմական առաջնորդներից էր Գաբրիել եպս Այվազովսկին (Այվազյան, 1857–1866 թթ.), որն զգալի վաստակ է ունեցել թեմի համայնքներում մշակույթի եւ լուսավորության զարգացման բնագավառում: Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի վերջին առաջնորդն էր Ներսես արք. Խուդավերդյանը (1898–1918 թթ.):

Հետագայում եւս թեմի համայնքներում շարունակվել է հայկական եկեղեցիների կառուցումը: 1910–1912 թթ. Բելցի քաղաքի կենտրոնում, ճարտարագետ-ճարտարապետ Կրասնոսելսկու նախագծով, կառուցվել է Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին (որը, սակայն, չի պահպանվել):

Գրիգորիուպոլսի երկու փայտաշեն եկեղեցիների մասին առաջին հիշատակությունը վերաբերում է 1804 թ.: 1817 թ. կառուցվել են Ս. Աստվածածին եւ Ս. Գեւորգ քարաշեն եկեղեցիները: XIX դ. կեսին Իզմայիլից գաղթած հայերը կառուցել են եւս մեկ եկեղեցի՝ Ս. Պետրոս – Ս. Պողոսը կամ Ս. Նշանը: XIX դ. 1-ին քառորդից նկատելիորեն աշխուժացավ Գրիգորիուպոլսի

հասարակական կյանքը: 1806 թ. Մանուել Գյումուշխանեցու ջանքերով բացվեց ծխական դպրոց, 1868 թ.՝ Դավիթ վրդ. Շահինյանցի նախաձեռնությամբ՝ Ռուսաստանի հայկական առաջին իգական դպրոցը (Սրբուհյան): ➥ էջ 5, 7

ՄԱՐԿ ԿՈՒՐԼԵՐ

ԽԱՉՅԱԼ ՉԱՐԱԳՈՐԾԸ

Սկիզբը՝ թիվ 20

«Հիշի՛ր իմ մասին, երբ վերադառնաս քո թագավորությունը, երբ դու մահվանից հետո մտնես մի հեռավոր, անտեսանելի ոլորտի մեջ, որն այլեւս կապ չունի ներկա Իսրայելի թշվառության հետ, երբ, որպես փառապանծ թագավոր, երեւաս հանկարծակի վերափոխված այս երկրի վրա...»: Այս խոսքերի մեջ ժամանակների վերջում Հիսուսի պանծալի հայտնվելու մասին շատ ճիշտ ըմբռնում կա, ու նաեւ՝ «Եկեղեցու ժամանակի», Օծյալի մահվան ու նրա՝ ամպերի վրա հայտնվելու միջեւ ընկած ժամանակահատվածի մասին մի շատ հստակ տեսիլք: Արդյո՞ք եղել են նախնական զրույցներ: Զելոտն ու իր ընկերները Հիսուսին երեւի շտապեցրել են, որպեսզի նա ոգեկոչի հրեշտակների տասներկու լեգիոններին ու հռոմեական կայսրությունը մոխրացնի կրակով: Ու երեւի Հիսուս պատասխանել է այսպես. «Նախ, պետք է, որ մարդու Որդին մատնվի, այնուհետեւ իր կյանքը տա որպես փրկագին շատերի համար...»: Զելոտների անհամբերությանն ու նրանց եսասիրությանը Հիսուս հակադրել է իր հանրահայտ «պետք է»-ն, որ իրեն թելադրում է Ընտրյալ լինելու գիտակցությունն առ այն, որ ինքը կոչված է իրականացնելու աստվածային կամքի նախօրոք մտահղացված ծրագիրը: Պետք է, որ Քրիստոս դիմադրի քաղաքական կարիերա անելու զելոտական գայթակղությանը. նրա թագավորությունն այս աշխարհից չէ: Մարդը միայն հացով չէ, որ ապրելու է: Ով կպայքարի սրով, սրից էլ կընկնի... Պետք է, որ Քրիստոս իր կյանքը կամովին տա իր գառներին, որպեսզի կատարի աշխարհի փրկությունը: Ծրագիրն ամրագրված է Եսայի 53-ի մարգարեությամբ: Պետք է այն իրականացնել: Պատիվն ու փառքը կգան հետո: Միայն դրանից հետո մարդու Որդին կհայտնվի երկնքի ամպերի վրա: Դա կլինի այն ժամանակ, երբ բոլոր բաները կնորացվեն, ու կայսրությունները կփլուզվեն: Ակնհայտ է, որ զելոտներն այդ հայացքներն ընդունում են մեծ դժվարությամբ: Իհարկե հուդայականության մեջ եղել են խմբակներ, որոնք նախատեսում էին մի որոշակի ժամանակահատված Օծյալի գալստյան ու «գալիք դարի» ժամանման միջեւ, երբ փրկությունը լինելու է ամբողջական: Երբեմն նույնիսկ խոսում էին Օծյալի ինչ-որ խավարման մասին՝ բանտվածության, անգամ մահվան ձեւով: Բայց զելոտներին, որոնց հատուկ էին հախուռնությունն ու անժամանակ արարքները, մտքի այդ հոսանքներն օտար էին: Նրանց համար «Օծյալի օրերը» Հռոմի ավերման եւ Իսրայելի հաղթանակի օրերն են: Ապագայի իրենց տեսիլքը կանգ էր առնում անմիջականի վրա: Այն սահմանափակվում էր երկրային ու ազգային ոլորտով:

Նրանք չկարողացան հասկանալ Հիսուսին: Նրան մի պահ մոտենալուց հետո հիասթափված հեռացան. ու նրա խաչվելու փաստը, նրանց կարծիքով, արժե, որ ծաղրվի, քանզի ապացուցում է, որ նա սխալվում է... ➥ էջ 6, 8



Բրամանտինո. «Խաչելություն»

Վաթսունականների արձակագիրներ.
Ժամանակը եւ հերոսը

Սկիզբը՝ թիվ 12–20

Մեր օրերի կյանքը, մեր իրականությունն ստեղծագործական նյութ են նաեւ Զորայր Խալափյանի համար: Նրա «Հեղեղ», «Որտե՞ղ էիր, մարդ աստծո», «Պատը», «Ոսկե միջինը», «Ձեր դիմանկարը», «Մեռնող հառնող» վեպերում ու վիպակներում ներկայացվում են մեր կյանքի տարբեր իրադրություններ, եւ ստեղծվում համապատասխան հերոսներ:

Պատասխանելով «Վեպը՝ վիպասանի տեսանկյունից» հարցաթերթիկին՝ Խալափյանն արտահայտել է այսպիսի միտք. «Կա ոչ թե ռեալիստական վեպի ճգնաժամ, այլ նոր հերոսի (կերպարի) ճգնաժամ» (*«Գարուն», 1970, թիվ 2, էջ 47*): Հարցի դրվածքը, ըստ էության, ճիշտ է եւ կարեւոր այն առումով, որ ժամանակակից հերոսի հայտնագործումը, որն իր մեջ պետք է կրի արձակագիրների տվյալ սերնդի կյանքի եւ աշխարհաճանաչողության հիմնական գծերը, արտաքուստ մատչելի թվալով հանդերձ, նաեւ դժվար է, քանի որ պետք է կարողանալ զանազանել մնայունն ու անցողիկը, հիմնականն ու երկրորդականը եւ այդ հերոսի մեջ խտացնել ժամանակի ոգին ու նրան տալ հանրային նշանակություն: Խալափյանի գրական որոնումներն ընթանում են հիմնականում հերոսի այս տեսակի հայտնաբերման ուղղությամբ: Նրա հաջողությունների, անգամ թերացումների մեջ նկատելի է իր սերնդի աշխարհաճանաչողության նախադրյալներից բխող՝ իր իսկ սերնդի կյանքի վիպական պատմությունն ստեղծելու սկզբունքային կողմնորոշում:

Նրա առաջին՝ «Հեղեղ» վիպակում գյուղում կատարվող ջրանցքի շինարարության եւ սիրո առանցքային գծերի զուգակցումով ստեղծվում են գյուղական իրականության մեջ գործող մի քանի մտավորականների՝ գյուղի բժշկի, ուսուցչի, շինարարության նպատակով գյուղ եկած ճարտարագետի եւ նրա կնոջ կերպարները: Գյուղը վիպակի ընդգրկման մեջ պայմանական ու կրավորական իրականություն է, եւ հերոսների կապը գյուղի կյանքի հետ, եթե չասենք բացառված է, ապա աննկատելի է: Բացի դա, գործը զուրկ է նաեւ հարցադրման սրությունից, ինչի հետեւանքով անլիարժեք ու թույլ են ստացվել կերպարները: Փաստորեն, հերոսների ընտրությունը մնում է արտաքին շերտի վրա, իսկ նրանց էությունը բացահայտվում է բավականին մակերեսայնորեն: Քաղաքի մարդու եւ գյուղի իրականության օրգանական կապ ստեղծվեց նրա «Որտե՞ղ էիր, մարդ աստծո» վեպում:

Ընդգրկումով եւ կենսական բազմաշերտ նյութի պատկերման տեսակետից այս գործն առանձնահատուկ է Խալափյանի ստեղծագործության մեջ: Ընդգրկումն ամբողջ խորհրդային իրականությունն է՝ 1920–1930-ականներից մինչեւ պատերազմ ու հետպատերազմյան շուրջ երկու տասնամյակները: Ընդգրկման ժամանակով ու տեւականությամբ պատկերվող նյութը հիմք է ծառայում վեպի գլխավոր հերոսի՝ քաղաքից գյուղ մեկնած բժիշկ Ստեփան Եսայանի գիտակցական կյանքի ամբողջ ընթացքը պատկերելու համար: Հերոսի այդ տեսակն անչափ բնորոշ է մեր կյանքին եւ խտացնում է իրականության հանգուցային որոշ խնդիրներ:



Ի հակադրություն «Հեղեղ»-ի՝ այս գործում քաղաքից գյուղ մեկնած բժշկի եւ գյուղի հետ ունեցած նրա կապը շատ սերտ է: Նյութի լայն ընդգրկման տեսադաշտում հեղինակն իր գլխավոր հերոսին միայնակ չի թողնում: Նրա գործունեության ու կյանքի հարաբերությունների հետ կապված՝ նկատելի տեղ է հատկացվում նաեւ 1930-ականների գյուղական կյանքին, պատերազմական տարիներին, հետպատերազմյան շրջանին եւ, ընդհանրապես, խորհրդային իրականության անցյալին ու ներկային բնորոշ բազմաթիվ դեպքերի, մարդկային ճակատագրերի: Գլխավոր հերոսը գործում է ժամանակներին հատկանշական տարբեր կապերի ու հարաբերությունների ոլորտում եւ գործողության մեջ ներքաշում իր հետ, իր ապրած վիճակների հետ առնչվող բազմաթիվ դեպքեր ու դեմքեր:

Կյանքի տվյալ փուլի պատկերման Խալափյանի առանձնահատկություններից մեկն այն է, որ նա կյանքի ընթացքը չի ավարտում մի որեւէ պատմությամբ կամ կերպարով: Նա կյանքը պատկերում է իր շարժման մեջ եւ փորձում ճյուղավորումներն ընդգրկել ամբողջությամբ:

«Որտե՞ղ էիր, մարդ աստծո» վեպում Խալափյանն իր հերոսին պատկերում է ոչ միայն արտաքին կապերի ու հարաբերությունների մեջ, այլեւ թափանցում նրա էության խորքերը եւ նրա կյանքի իմաստի բացահայտման փորձեր անում:

➥ *էջ 6, 8*

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄԻ՝
1830–1918 ԹԹ. ՀՈԳԵՒՈՐ-ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԴԱՐՁՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

➥ *էջ 4*

1930-ական թթ., սակայն, քաղաքի հայկական բոլոր եկեղեցիները քանդվել են:

1800-ական թթ. բազմաթիվ գրիգորիուպոլիսցիներ սկսել են տեղափոխվել Օդեսա եւ Ռուսաստանի այլ քաղաքներ կամ վերադառնալ Բեսարաբիա: Հայ բնակչության թիվը Գրիգորիուպոլսում սկսել է նվազել: 1820-ական թթ. եւ հետագա տասնամյակներին (մինչեւ 1861 թ.) քաղաքում ապրել է շուրջ 2 հազար հայ:

Հնչեշտի (Хынчешты, Хынчешть, Ганчешты, 1965–1991 թթ.՝ Կոտովսկ) հայկական գաղութը կազմավորվել է XVIII դ. վերջին: Նշանավոր Մանուկ բեյ Միրզայանն աջակցել է գաղթականներին, հայերի ու մոլդավացիների համար կառուցել առանձին փայտաշեն եկեղեցիներ (1816 թ.): Նշանավոր էր Սուրբ Աստվածածին եկեղեցին (կառուցված՝ 1870–1872 թթ., չի պահպանվել): Իտալացի ճարտարապետ Ալեքսանդր Բեռնարդացին այն կառուցել էր հայկական միջնադարյան ճարտարապետության ավանդական ոճով, իսկ որմնանկարները կատարել էին Հովհաննես Այվազովսկին եւ իր աշակերտները: Կենտրոնագմբեթ այդ եկեղեցին նման է եղել էջմիածնի Մայր տաճարին, իսկ ներքնահարկում գտնվել է Միրզայանների ընտանեկան դամբարանը:

XIX դ. վերջից Հնչեշտի հայ համայնքի տնտեսությունն սկսել է անկում ապրել, հետադիմել՝ կապված հայերի թվի նվազման հետ: 1867 թ. Հնչեշտում կար 430, 1880 թ.՝ 206, 1925 թ.՝ 150, 1932 թ.՝ 50 հայ:

Ղավշանում (ռուս.՝ Каушаны, Кэушень, այժմ՝ Կաուշանի) հայերի մասին ամենավաղ հիշատակումները վերաբերում են 1768 թ.: Հայերն ունեցել են եկեղեցի, որն ավերվել է 1806–1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին: XVIII դ. վերջին Ղավշանում ապրել է 1000-ից ավելի հայ: 1791 թ. հայերի մեծ մասը վերաբնակեցվել է Դնեստրի ձախափնյա շրջանում եւ 1792 թ. մասնակցել հայկական Գրիգորիուպոլիս քաղաքի հիմնադրմանը:

Օրգեւ քաղաքում, ըստ գրավոր աղբյուրների, հայերը հիշատակվում են 1606 թվականից: Ներկայումս պահպանված Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցին կառուցվել է 1902–1903 թթ.՝ կալվածատեր Բաղդասարովի միջոցներով եւ Ալեքսանդր Բեռնարդացու նախագծով:

1830–ական թթ. Բեսարաբիայի եւ Մոլդավիայի հայկական եկեղեցիներին կից ծխական նոր դպրոցներ են բացվել Ներսես արք. Աշտարակեցու ջանքերով: XIX դ. սկզբին Քիշնեւում գործել է ծխական երկսեռ դպրոց, ավելի ուշ՝ միջնակարգ դպրոց, որտեղ

1865 թ. սովորել է 30 աշակերտ: XIX դ. կեսին Հնչեշտում բացվել է հայկական տարրական դպրոց (Մսեր Մսերյանցի տանը):

Նովոռոսիյսկը հիմնվել է 1838 թ.՝ հայազգի ծովակալ Լազար Սերեբրյակովի (Արծաթագործյան) նախաձեռնությամբ: 1840 թ. այստեղ հայեր են հաստատվել Ղրիմից, 1868 թ.՝ Սամսունի եւ Տրապիզոնի շրջաններից: 1849 թ. կազմավորվել է հայկական ծխական համայնք: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Նովոռոսիյսկում կար 1800, 1920-ական թթ. կեսին՝ 4000-ից ավելի հայ: Հայկական ծխական համայնքներ են կազմավորվել նաեւ Սոչի, Գելենջիկ, Տագանռոգ, Տուապսե, Անապա եւ այլ քաղաքներում:

1895 թ. Հայ Առաքելական Եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի կենտրոն է դարձել Նոր Նախիջեւանը, եւ թեմական առաջնորդի նստավայրը Քիշնեւի Ս. Աստվածածին եկեղեցուց փոխադրվել է Նոր Նախիջեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի:

Նոր Նախիջեւան հայկական գաղթավայրը Դոն գետի աջ ափին՝ Ս. Դմիտրի Ռոստովսկու ամրոցի մոտ, հիմնադրել են Ղրիմից գաղթած հայերը 1779 թ.: Շրջակայքում հիմնվել են Չալթըր, Թոփթի, Սեծ Սալա, Սուլթան Սալա, Նեսվիտա հայկական գյուղերը, որոնք կազմել են գաղթավայրի անբաժան մասը: XVIII դ. վերջին կառուցվել են Սուրբ Խաչ վանքը, Սուրբ Լուսավորիչ, Սուրբ Նիկողայոս, Սուրբ Թեոդորոս, Սուրբ Համբարձում, Սուրբ Գեւորգ եւ Սուրբ Կարապետ եկեղեցիները, հիմնվել են դպրոցներ, սկսել է գործել Խալդարյան տպարանը:

1812 թ. Նոր Նախիջեւանն ունեցել է 8484, իսկ շրջակա հայկական գյուղերը՝ 2633 հայ բնակիչ, 1904 թ. քաղաքն ունեցել է 32 հազար, գյուղերը՝ 20 հազար հայ բնակիչ:

Նոր Նախիջեւանի Ս. Խաչ վանքի աղյուսաշեն եկեղեցին (ռուսական կլասիցիզմի ոճով) կառուցվել է 1783–1791 թթ. եւ օծվել 1792 թ. (ճարտ.՝ Ի. Ստարով): Եկեղեցին խաչաձեւ գմբեթավոր կառույց է: Պատերը զարդարվել են Ղրիմից բերված մանրաքանդակ 13 խաչքարով:

Նոր Նախիջեւանի Ս. Խաչ վանքում 1784 թ. Հովսեփ արք. Արղությանի նախաձեռնությամբ բացվել է դպրոց (1868 թվականից՝ «Ս. Խաչի ժառանգավորաց գիշերօթիկ վարժարան»), որը գործել է տարրական դպրոցի ծրագրով (դասավանդել են կրոնագիտություն, վայելչագրություն, թվաբանություն, ձեռքի աշխատանք, գյուղատնտեսական առարկաներ), ունեցել է գրադարան, թանգարան: Ս. Խաչի ժառանգավորաց վարժարանը եղել է հայկական գիշերօթիկ առաջին դպրոցը: Դասավանդել են Թ. Մարուքյանը, Հ. Ալամդարյանը, Խ. Ստեփանեն, Գ. Բեդելյանը եւ ուրիշներ: Ունեցել է ուսուցման 6-ամյա ժամկետ, 70–100 աշակերտ: Գոյատեւել է մինչեւ 1920-ական թթ. սկիզբը: Երբ 1791 թ.՝ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, Ա. Սուվորովը գրավել է Իզմայիլը, քաղաքի 30 հայ որբերին բերել են այստեղ, եւ երեխաներն ապրել ու կրթվել են վանքի միջոցների հաշվին: 1789 թ. Հովսեփ արք. Արղությանը Սանկտ Պետերբուրգից Նոր Նախիջեւանի Ս. Խաչ վանք է տեղափոխել Գրիգոր Խալդարյանի տպարանը, որը դարձել է Հարավային Ռուսաստանի առաջին տպարանը: 1789 թ. աշնանը հնդկահայերի նյութական օժանդակությամբ վանքի եկեղեցու արեւելյան կողմում կառուցվել է մեծ՝ 37-սենյականոց շենք՝ առաջնորդարանի, դպրոցի եւ տպարանի համար: Տպարանում մոտ քսան գիրք է հրատարակվել՝ նպատակ ունենալով պայքարել կաթոլիկ վարդապետության գրավոր քարոզարշավի դեմ եւ պաշտպանել Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետությունն ու ինքնատիպությունը, նպաստել լուսավորության գործին՝ ապահովելով հայկական դպրոցները դասագրքերով, օժանդակել Ռուսաստանի նորահաստատ հայ գաղթավայրերի բնակիչների՝ ռուսերենին տիրապետելուն: XIX դ. վանքից հյուսիս՝ Տեմերնիկ գետի ափին, հիմնվել է վանքի այգին (կոչվել է «Հայկական պարտեզ»), որը դարձել է Նոր Նախիջեւանի բնակիչների հանգստավայրը:

➥ *էջ 7*

Վաթսունականների արձակագիրներ.

Ժամանակը եւ հերոսը

➥ *էջ 5*

Ստեփանը միայնակ մարդու կերպար է: Ինքն ու մայրն են: Ապրում է մորից հեռու: Անգամ մոր հետ, մինչեւ մոր մահը, նրանք երկու տարբեր աշխարհի ներկայացուցիչներ են եւ հոգեբանական ոչ մի առնչություն չունեն իրար հետ: Մայր ու որդի օտարանում են: Ստեփանը չի ամուսնանում: Միայնությունը կեղեքում է նրան եւ աստիճանաբար մտերմացնում գյուղին ու գյուղի մարդկանց: Քաղաքի հետ նրա կապերը թուլանում են: Եվ անգամ ծերության օրերին, երբ մի կերպ հաստատվում է քաղաքում ու հիվանդանոցներից մեկում աշխատանքի տեղավորվում գլխավոր բժշկի տեղակալի պաշտոնով, էության մեջ կուտակվող մենության ցավից թողնում է քաղաքն ու շրջապատի անծանոթ մարդկանց եւ մեկնում գյուղ՝ արդեն իսկ հարազատ միջավայր: Հարազատությունն ստեղծվում է մարդկանց հետ ձեւավորված հարաբերություններով: Այս առումով լայն ընդգրկումով ներկայացվում է հատկապես գյուղացիներից մեկի՝ Վասիլի ընտանիքը, ում տանն առաջին անգամ գյուղ մտնելիս իջեւանել էր բժիշկը եւ ում տանն էլ տասնամյակներ հետո մեռնում է:

Բժշկի կյանքի դատարկությունն իմաստավորվում է գյուղի կյանքով, գյուղի մարդկանց հետ ունեցած կապերով ու հարաբերությամբ, իսկ Անտիկի հանդեպ ձեւավորված խեղճ ու ծածուկ սերը դառնում է այն միակ կարոտը, որ կարող էր ապրեցնել բուռն կյանքից դուրս մղված գյուղական բժշկին: Եվ քաղաքում՝ անծանոթ մարդկանց անհաղորդ մթնոլորտում, նա հանկարծ զգում է անցած տարիների ու ապրած կյանքի կանչը. «Անցյալը կանչում էր նրան, կարծես նա՝ Ստեփանը, մնացել է այնտեղ՝ լեռներում, մշուշների մեջ, գյուղի ճամփաներում, մի սենյականոց տներում, հիվանդանոցում: Քաղաք է վերադարձել ընդամենը մի ծեր մարդ, մի ծերուկ: Իսկ ամբողջ մարդը մնացել է, չի վերադարձել»: Մենությունը եւ չդասավորված կյանքը նրան ստիպում են կյանք դարձնել այն ամենը, ինչը, ըստ էության, ունի երկրորդական, երրորդական նշանակություն:

Մի կողմից՝ գլխավոր հերոսի հոգեբանության մեջ կատարվող խորացումը, մյուս կողմից՝ կյանքի լայն ընդգրկումը, ժամանակային տարբեր հատվածների, կյանքի տարբեր վիճակների ու ոլորտների համադրումը՝ ստեղծում են հարուստ հենք ունեցող

գեղարվեստական մի ստեղծագործություն, ինչի արժեքը պայմանավորում են թե իրականության տարողունակ նկարագրությունը եւ թե տվյալ իրականությանը հատկանշական հերոսների, առաջին հերթին՝ գլխավոր հերոսի կերպավորումը:

Խալափյանի ստեղծագործության մեջ կյանքն իր արտացոլումն է գտնում տարբեր կողմերով. հատկապես պատերազմական իրականության պատկերմամբ եւ հետագա տասնամյակներին ձեւավորված կյանքի ընթացքով: Պատերազմին է նվիրված Խալափյանի «Երիցուկի թերթիկներ» վիպակը: Գործողությունները կատարվում են թիկունքում՝ Հայաստանի գյուղերից մեկում: Դեպքերի ընթացքը ծավալվում է մեկ ընտանիքի՝ Հունանի եւ նրա երեք որդիների շուրջ: Այդ կերպարների եւ նրանց հարաբերությունների մեջ պատերազմական տարիների կյանքը բեկվում եւ իր արտացոլանքն է թողնում որեւէ ձեւով: Հունանի մեծ որդին՝ Ալեքսանը, կյանքը վեր է դասում քաղաքացիական ամեն մի պատասխանատվությունից եւ դառնում դասալիք. նրա հետագա կյանքը մեղքի քավություն է: Մարդը դառնում է ակամա հանցագործ եւ տանուլ է տալիս այն կյանքը, ինչի համար հանցագործ էր դարձել: Միջնեկ որդին՝ Արմենակը, փտախտից կորցնում է ոտքերը, ֆիզիկական խեղումը հոգեկան խեղման է հասցնում նրան: Անլիարժեքության զգացողությունը նրան մղում է մահվան մեջ որոնելու կյանքի շարունակությունը: Իսկ կյանքը նվիրումով իմաստավորելը նրա համար մի պահ դառնում է ինքնադրսեւորման ձեւ, լինելության գրավական, ինչը, սակայն, երկար չի տեւում: Երրորդ որդին՝ Մինասը, պայքարում է ապրելու եւ սիրելու իր բնական իրավունքների համար, սակայն վերջը դարձյալ մահ է, որ հանդիպում է նրան պատերազմի դաշտում:

Փաստորեն վիպակի հերոսներից ամեն մեկի հոգեբանության համար, որպես մեկ ընդհանուր բաժանելի, ներկայանում է ապրելու տենչը, որ առանձնահատուկ իմաստ է ստանում հատկապես պատերազմական իրադրության մեջ:

Հեղինակը կարողացել է հոգեբանական կտրվածքով ներկայացնել պատերազմական կյանքը եւ իմաստավորել այդ տարիների կյանքի միակ իմաստը՝ ապրելու տենչը, ինչն իր մեջ ենթադրում է նաեւ հաղթանակի տենչ: Ամեն մի ժամանակաշրջան, ամեն մի վիճակ ունեն իրենց գլխավոր խորհուրդը, որ երբեմն թվում է շատ պարզ, բայց պարզությամբ հանդերձ՝ կորչում է բազում մանրամասների եւ լրացուցիչ տարրերի մեջ: Դա հատկապես նկատելի է պատերազմին նվիրված անհամար գործերում: Խալափյանը կարողացել է գտնել պատկերվող ժամանակաշրջանի գլխավոր իմաստը եւ այն յուրովի բեկելով իր հերոսների մեջ՝ ստեղծել ժամանակը բացահայտող բնորոշ կերպարներ: Թեեւ այդ կերպարները զուրկ են վիպական հզորությունից ու թափից, բայցեւայնպես կենսականորեն հավաստի են:

Հանդգնության մի սահման կար, որ գրողները չէին կարող անցնել, ոչ թե չէին կարողանում, այլ չէին կարող, որովհետեւ դաժան ու խորքային ճշմարտությունը գաղափարապես չէր հանձնարարվում, քանի որ այնտեղ հաղթանակի ուռաներով շղարշված ողբերգությունն էր: Սա նշանակում է, որ կենսական ճշմարտությունը մասամբ էր թույլատրելի, իսկ մասն ամբողջը չէ, որտեղից էլ՝ այս բնույթի գրական երկերի տարբերությունը Հրաչյա Քոչարի տեղեկատվական, բայց ոչ գեղարվեստական «Մեծ տան զավակները» ստվարավեպից, բայց ոչ էական գերազանցությունը:

Խալափյանի հաջորդ գործերում («Պատը», «Ձեր դիմանկարը») կարեւոր տեղ է գրավում պատերազմական տարիների եւ հետպատերազմյան սերնդի կյանքի խաղաղ տարիների պատկերումը: Փոխվում են թե՛ հարցադրումը եւ թե՛ հերոսի տեսակը:

Այս գործերում առավել չափով կարեւորություն են ստանում կյանքում նոր սերնդի հոգեբանական, բարոյական հիմքերի պարզաբանման հարցերը: Ամեն մի սերունդ իր իմացածով, իր տեսանկյունով է փորձում ապրել իր կյանքի ժամանակը: Սակայն միջամտությունները շատ են եւ բազմազան՝ սկսած ծնողներից ու շրջապատից մինչեւ տարբեր կարգի «բրածո» մարդիկ, ովքեր սերնդային այլ մտածողության ու հոգեբանության կրողներ են: Այս երկերում պատկերվում են այնպիսի հերոսներ, որոնք գտնվում են որոնումների եւ ձգտումների իրականացման ճանապարհին, գործում են դեռեւս չկայունացած, վերջնական, ավարտուն տեսք չընդունած վիճակների մեջ եւ ապրում կազմավորման շրջան: Դա իր հերթին պայմանավորում է կենսական նյութի այնպիսի ոլորտի ընտրություն, որի մեջ գործեն համապատասխան կերպարներ, միաժամանակ, այդ ոլորտում ի հայտ գան մեր առօրյային բնորոշ որոշակի հանգուցային կետեր, արծարծվեն կարեւորություն ունեցող հարցեր: Մի կողմից երիտասարդություն՝ սեր, երազանք, կատարելության ձգտում, հրապույրներ, հաճույքներ, մենության կեղեքող վայրկյաններ, թախիծ, ձանձրույթ, գորշություն, մյուս կողմից՝ հասարակական հարաբերություններ, նոր սերնդի նոր մտածելակերպ ու գործելակերպ, հին սերնդի կողքին սեփական դիրքի ճշտում, հանրության մշակած օրենքներին սեփական նախասիրությունների հարմարեցում: ➥ *էջ 8*

ՄԱՐԿ ԿՈՌԼԵՐ

ԽԱՉՅԱԼ ՉԱՐԱԳՈՐԾԸ

➥ *էջ 4*

Բայց զելոտներից մեկը դադարում է ծաղրել: Արդյոք ֆիզիկական տառապա՞նքը, իր վախճանի մոտենա՞լը կամ տախտակի տե՞սքը եւ կամ Հիսուսի ներման խոսքերն ու մի հայա՞ցքը, մի ժպի՞տը տակնուվրա արեցին նրա հոգին: Հավանաբար այդ բոլորը միասին նպաստել են, որ նա իրերը տեսնի բոլորովին այլ լույսով: Ես սխալվում եմ: Նա իրավացի է: Ես անմիտ եմ: Նա պայծառատես է: Իմ մոլեռանդությունը չի փոխի աշխարհի դեմքը: Բայց Աստված դա անելու է: Եվ Աստված անում է դա, քանզի այդ անմեղ մարդը, որը դասվել է չարագործների շարքը, նա է, ում միջոցով Աստված այս աշխարհում հաստատում է իր արքայությունը: Նրա վրդովեցուցիչ մահը պարտություն չէ: Նրա նահատակությունը վերջ չէ: Նա դրանից վեր է հառնելու այն ողջ զորությամբ, որից մի պահ ինքը հրաժարվել էր: Այդ հոգեւարք ապրողի մեջ ես տեսնում եմ հաղթական Քրիստոսին, ում խոնարհաբար խնդրում եմ մի փոքրիկ մասնաբաժին այդ հաղթանակից:

Ով թակում է դուռը, այն բացվելու է նրա առաջ: Հիսուս պատասխանում է խնդրանքին: Նա հավանություն է տալիս այդ խնդրանքին՝ ուղղելով այն: Քանզի այդ խոստովանության, այդ հայտնված հույսի մեջ նա դեռեւս տեսնում է մի վտանգավոր տարր: Զելոտը հիացմունքի արժանի ջանք է գործադրել իրականությունն ըմբռնելու համար: Բայց իր անցյալից միանգամից հրաժարվելը դժվար է: Նրա հայացքը թագավորության մասին արդյո՞ք դեռեւս երանգված չէ վրեժխնդրության, բռնարարքների գաղափարներով: Ահա ինչու Հիսուս ընտրում է աներկիմաստ մի բառ՝ վերցված բոլորովին այլ ոլորտից, գործածված նրանց շրջանում, ովքեր մտածում էին ողջ մարդկության ապագայի մասին, քանզի Աստված բոլորի Հայրն է… Երբ դրախտն ստեղծվեց, հրեա ժողովուրդը գոյություն չուներ: Դա այն տեղն է, ուր ապրել է բոլոր մարդկանց նախնին: Այդ բառեզրը «Իսրայելի պատմությունից անդին է»,– հավաստում է այս հարցի մասնագետներից մեկը: «Թող ի՞նձ իմ գահ բարձրանալու հոգսը,– ասում է Հիսուս,– այն իհարկե փառավոր է լինելու, բայց շատ տարբեր այն բանից, ինչը դու ես պատկերցնում: Քեզ համար կարեւորն այն է, որ ես ընդունեմ քո խոստովանությունը. ես քեզ համար երաշխավորում եմ հավիտենական կյանք»:

Բայց ի՞նչ նոր բան կա այդ բառերի մեջ: Հին Կտակարանի վերջին էջերը խոսում են մեռելների հարության հեռանկարի մասին: Եթե Աստված ինքնիշխան է, նա նաեւ Տերն է հանգուցյալների: Ցանկանալով իր յուրայինների երջանկությունը՝ Աստված ուզում է նաեւ, որ նրանք ապրեն մահվանից հետո: «Շատերը նրանցից, որոնք քնած են փոշու մեջ, կարթնանան…Նրանք, ովքեր խելացի են եղել, կփայլփլեն, ինչպես երկնքի լույսը, միշտ եւ հավիտենապես»: Դանիել մարգարեն իր գրքի 12-դ պարբերության մեջ ազդարարում է մեռելներից հարության մասին: Եվ հրեա ժողովրդի մի մեծ հատվածը Հիսուսի ժամանակներում դավանում է այդ ուսմունքը: Հիսուս եւս: Ծայրահեղ պահպանողական սադուկեցիները դրանից անհարմար են զգում: Իսկ առաջադեմ փարիսեցիները հրճվում են: Հարություն առածների վիճակի մասին իր հանրահայտ պատասխանի մեջ (Ղուկաս 20. 27) Հիսուս նրանց կողմն է բռնում. գոնե այդ հարցում: Աբրահամի ծոցը, երկնային խնջույքը, գալիք դարը, դրախտը, երկիրը, որ ժառանգում են, տարածված արտահայտություններ էին, որ Հիսուսը կրկնում է՝ նկատի ունենալով երջանկության վայրը: Ուրեմն այդ ի՞նչ «հատուկ քրիստոնեական բան» կա Հիսուսի այն պատասխանի մեջ, թե՝ «Այսօր դու ինձ հետ կլինես դրախտում…»:

Նախ՝ առկա է Հիսուսի հավաստիացումն առ այն, որ մահն իր համար ամեն ինչի ավարտը չէ: Մինչ Մարկոսն ու Մատթեոսը հիշատակում են խաչյալի անձկալի ճիչը, Ղուկասը ուշադրություն է դարձնում Հիսուսի հանգստության ու վստահության վրա: Նրա պատմությունից ակնհայտ է դառնում Քրիստոսի հանգստությունը, քանզի, ի հեճուկս ամեն ինչի, նա գիտե, որ իր Հայրն իրեն չի լքելու. նա իրավունք ունի վերածնվելու գերեզմանից անդին:

Այն ժամանակվա հրեան, եթե անգամ հավատում էր հարությանը, երբեք վստահ չէր, սակայն, իր բախտին: Կշեռքի վրա կա երկու կշռաթաթ: Ո՞րն է ավելի ծանր կշռում. արժանիքների՞նը (մեղանչում ու բարի գործեր), թե՞ մեղքերի՞նը: Ներկա տառապանքները նշանն են այն բանի, որ Աստված պատժում է արդարներին հիմա, որպեսզի մահվանից հետո նրանց երկնային երանություն պարգեւի: Այսպես է պետք հասկանալ Ղուկաս 16-ը՝ աղքատ Ղազարոսի թշվառությունը, ինչը նրան արժեցավ Աբրահամի ծոցը մտնելու երանությունը: Բայց դա էլ հենց ապացույցն է այն բանի, որ անգամ լավագույնների համար ամեն ինչ կախված է Աստծու ողորմածությունից: Երանությունը պիտի գա, դա հաստատ է: ➥ *էջ 8*

«Ակունքի» ակունքներում

Սկիզբը՝ թիվ 19–20

Հարազատ երգը

Արարատը... այսքան մոտիկ, այսքան շատ մոտիկ: Ո՞ւմ մտքով կանցներ: Այնպես ջերմ է այս հանդիպումը, եւ այնքան սպասված այս պահը... Թվում է՝ ոչ միայն դու ես գնում դեպի լեռը, այլեւ նա է մոտ գալիս՝ առաջին քայլերն անող հարազատ մանկանը դիմավորող գորովագութ մոր պես...

Արարատը... հստակ երեւում են նրա յուրաքանչյուր քարն ու ձորակը, վիհն ու ժայռածերպը, փեշերին փռված կապտերանգ մանուշակներն ու մամուռ կանաչը...

Արարատը... մեր կարոտի լեռը...

...«Ակունքի» մասնակիցներս սահմանապահների եւ դիվանագետների խմբի ուղեկցությամբ մտել ենք Խորհրդային Միություն—Թուրքիա պետական սահմանը բաժանող փշալարերից ներս: Երկկողմ համաձայնություն է ստացվել ոտքով գնալու մինչեւ սահմանամերձ Իգդիր, ապա ավտոբուսով մեկնելու Ստամբուլ, որտեղի անհամար հայրենակարոտ հայերն սպասում են հայրենի հինավուրց երգերն ու պարերը ներկայացնող խմբին:

...Պարզվում է, որ Իգդիրը Թուրքիայի հետամնաց քաղաքներից է: Ասենք՝ զարմանալի ոչինչ չկա, քանի որ քաղաքի այժմյան տերերն առանձնապես մտահոգված չեն եղածը պահպանելու, առավել եւս՝ նոր բան ավելացնելու խնդրով:

Թեք պատերով մի ցեխածեփ փայտաշեն շենքի հնամաշ մուտքի մոտ մեզ դիմավորում են Թուրքիայում Խորհրդային դեսպանության ներկայացուցիչները, բարձրաստիճան զինվորականներ՝ կանանց հետ: Ժպտալով պատասխանում են մեր ռուսերեն ողջույնին:

Շենքի ներսում զով եւ կիսամութ սրահն է: Այստեղ պետք է մերոնք իրերը հանձնեն, ներկայացնեն Ստամբուլ մեկնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, իսկ ես եւ Սուսաննան, քանի որ փաստաթղթեր չունենք, սահմանապահ զինվորների հետ պետք է հետ գնանք:

Սրահի խորքում շարժասանդուղք կա, իսկ նրա կողքին մուգ մանուշակագույն, ծաղկավոր զգեստով, սպիտակ գլխաշորով մի ծեր թրքուհի է կանգնած: Ոլորած բեղերով երկու թուրք զինվոր ստուգում են փաստաթղթերը, նրանցից մեկը կասկածելի հայացքով ժպտում է մեր աղջիկներին: Տարօրինակ է, մի քանի հոգու ստուգելուց հետո զինվորները հեռանում են՝ ինձ եւ Սուսաննային անգամ չնկատելով:

Թրքուհին իր խորհրդավոր հայացքով ինձ է նայում: Հետաքրքիրն այն է, որ կարծես այստեղ կատարվող ոչ մի բանի հետ նա կապ չունի, անտարբեր եւ ամեն ինչից անտեղյակ կանգնել է:

— Վարդուհի՛, հնարավո՞ր է՝ հանկարծ ինձ ու Սուսաննային էլ նստեցնեն ավտոբուս, ձեզ հետ տանեն:

— Հավանաբար այդպես էլ պետք է լինի: Կտանեն, դուք էլ կգաք, էլ չասես՝ ես թղթեր չունեմ: Պատկերացնո՞ւմ ես, մի քանի ժամից Վանում ենք լինելու...

Իրերը հանձնելու արարողությունը շատ է երկարում, ձանձրույթից սկսում ենք երգել.

Նըստիր իմ գյամին, տէրթամ Աղթամար,
Մատաղ տկտրիմ քյո խաթրի խամար...

Վարդուհին ձայնակցում է, իսկ խորհրդավոր թրքուհին էլի մեզ է նայում: Աստվա՛ծ իմ, ինչ հետաքրքիր կանաչավուն հայացք ունի նա, ինչ իմաստուն կնճիռներով է պատված նրա թուխ-մագաղաթագույն դեմքը: Համակ ուշադրություն դարձած՝ մինչեւ վերջ լսում է մեր երգը եւ կարծես ինչ-որ բան է փորձում հիշել.

— Յավրո՛ւմ, բուրայա՛ գել,— զարմացած դեսուդեն եմ նայում,— բուրայա՛ գել,— ձեռքի շարժումից հասկանում եմ, որ ինձ է կանչում:

Ակամա մոտենում եմ: Ինչ-որ երկար եւ անհասկանալի խոսքեր է ասում թուրքերեն, ապա անսպասելի երգում: Նրա ձայնը սկզբում կերկերում է, երգն էլ կարծես սովորական թուրքական բայաթի է, բայց հետո... կամաց-կամաց զուլալվում է, հասկանալի դառնում, նույնիսկ կոմիտասյան հարազատ ելեւէջներ եմ զգում մեղեդու մեջ: Թուրքերեն բառերի միջից մի քանի անգամ հստակ որսում եմ «Արարատ» բառը: Նրա երգն այնքա՛ն հայկական է, այնքա՛ն հոգեհարազատ: Աստվա՛ծ իմ, մի՞թե իմ դիմաց ներքինբազմաբերդցի երգասաց Հարգո մարեն չէ, կամ էլ՝ վերինսասնաշենցի Եպրաքսյա Ոսկանյանը...

— Վարդուհի՛, լսո՞ւմ ես, նա բոլորովին էլ թրքուհի չէ, թուրքերը «Արարատ» չեն ասում, թրքացած հայուհի է նա...

Կարծես ասածս հաստատում են «թրքուհու» աչքերից սահող արցունքի կաթիլները: Հուզմունքից ես էլ եմ սկսում արտասվել: Ո՞վ գիտի, Արեւմտյան Հայաստանի ո՞ր շեն գյուղից է տեղահանվել ու դավանափոխ արվել երբեմնի տարագիր հայ աղջնակը...

Հետո... երգը կա, արցունքներս կան, բայց առեղծվածային «թրքուհին»... չկա...

Երգը կա... հնչում է իմ մեջ... Երգը փրկվեց...

Վերջ: Ամեն ինչ վերջացավ: Մերոնք պետք է շարժասանդուղքով իջնեն ավտոբուսի մոտ, ինչպես մետրոյում: Մենք երկուսով հրաժեշտ ենք տալու նրանց, բայց Սուսաննան ոչ մի կերպ չի ուզում հետ գալ:

— Ես խմբի հետ գնում եմ, ինչ լինում է, թող լինի,— որոշում է նա:

— Ի՞նչ արած, ես էլ մենակ կվերադառնամ:

Բոլորին բարի ճանապարհ եմ մաղթում:

— Մարո՛, բա ես ինչպե՞ս գնամ:

— Ա՛յ, այն դրսի զինվորներից մեկին հարցրու, մերոնցից են, ճանապարհը ցույց կտան,— ժպտալով ասում է Գրիգորի կողքին կանգնած Մարոն: Նրա ժպիտը ցած իջնող շարժասանդուղքի հետ գնում-փոքրանում է ու մարում...

...Շենքից դուրս եմ գալիս ու զարմանքից քար կտրում: Մեր սահմանապահ զինվորներից ոչ մեկը չկա: Շրջվում եմ եւ փայտաշեն տունն էլ այլեւս չեմ տեսնում: Միայն քաղաքն է մնացել, աչքիս առաջ փռված Իգդիրը՝ իր առօրյա կյանքով: Հայոց Մայացոտն գավառի երբեմնի Ցոլակերտը...

Չկա զանգակի ձայն, չկա հայ բարբառ,
Դարձել ես բնավեր գայլերի անտառ.
Դպրոցներով հարուստ մարդաշեն գավառ՝
Սգի փոխվեց սիրուն գովքդ, Սուրմալո՛ւ...
Ավա՜ղ, ավա՜ղ, Սուրմալո՛ւ,
Օձն է նստել բախտիդ վրա, Սուրմալո՛ւ...

Ականջիս «թրքուհու» երգն է:

Կեսօր է: Արեւոտ, պայծառ կեսօր: Փողոցներում կիսամերկ թուրք մանուկներ են վազվզում: Մի գեղեցիկ աղջնակ՝ ուսերին փռած թուխ, փայլուն մազերի մեջ վառ կարմիր ծաղիկներ, տուն է շտապում, հավանաբար՝ դպրոցից:

Փորձում եմ ինքս գտնել ճանապարհը: Ախր այս տները չկային...

Այգեպանդ չկա՝ այգիդ զարդարե,
Չորս կողմդ խավար, մութ ու գիշեր է,
Երանի Աստված քեզի պահպանե,
Արդյոք մի օր պիտի գնանք Սուրմալու:
Ավա՜ղ, ավա՜ղ, Սուրմալո՛ւ,
Օձն է նստել բախտիդ վրա, Սուրմալո՛ւ...

— Հալվա՜, գյուզել հալվա՜...

Մեկը փողոցում կնոջ հետ քաղցրավենիք է պատրաստում եւ տեղում էլ վաճառում:

...Ուղղակի հրաշքով դուրս եմ գալիս բավիղ-փողոցներից եւ ամայի դաշտով քայլում դեպի մեր սահմանը: Փոշոտ, կեղտոտ քաղաքը մնաց նրանց, իսկ երգը, հրաշք երգը՝ ինձ...

Քիչ հեռու իմ Երեւանն է՝ իր հոյակերտ շենքերով ու փողոցներով, Մատենադարանով, ծիծաղկոտ շատրվաններով ու գեղեցիկ աղջիկներով: Այնտեղ է իմ տունը, եւ ես տուն եմ տանում իմ նոր սովորած երգը. երգ, որ իմ ժողովրդինն է եղել եւ կրկին նրանը կլինի, երգ, որ փրկվեց կորստից...

Իսկ դիմացս հրաշքների հրաշքն է՝ Արարատը, դարձյալ Արարատը... հակառակ կողմից... մայրամուտին... պարուրված հրաժեշտի ծիրանագույն-մանուշակագույն թախծոտ ամպերով...

Անբախտ Արարատը յուր սեւ ամպերով
Ողբում է կորուստդ, քա՛ղցր Սուրմալու.
Դարձել ես ավերակ, հողին հավասար,
Հայաստանի փառք ու պարծա՛նք Սուրմալու:
Ավա՜ղ, ավա՜ղ, Սուրմալո՛ւ,
Օձն է նստել բախտիդ վրա, Սուրմալո՛ւ...

...Արթնանում եմ ձեռքիս ցավից: Մի քանի օր առաջ դանակով եմ կտրել: Նորից սկսել է տնքալ...

Ավա՜ղ, ավա՜ղ, Սուրմալո՛ւ...

Շարունակելի

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Հայ Առաքելական եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի՝ 1830–1918 թթ. հոգեւոր-լուսավորչական գործունեությունը

↩ *էջ 4, 5*

Նոր Նախիջեւանի Ս. Խաչ վանքը եղել է Հարավային Ռուսաստանի հայերի մեծահռչակ ուխտավայրը, մեծ թվով ուխտավորներ են եկել հատկապես Տիրոջ պայծառակերպության տոնին:

1811 թ. հիմնվել է հայկական հոգեւոր ուսումնարան, իսկ հետագայում՝ ծխական եւ գավառական դպրոցներ: 1857 թ. իգական դպրոց բացելու փորձ է կատարվել:

1880 թ. Ռափայել Պատկանյանի (տեսուչ եւ հիմնադիր) ջանքերով քաղաքում հիմնվել է արհեստագործական դպրոց՝ չորս տարվա դասընթացով, չունեւոր երեխաների համար՝ ձրի ուսուցմամբ: Նպատակը գրագետ արհեստավորներ պատրաստելն էր: Սովորում էին կոշկակարություն, դերձակություն, հյուսնություն, արծաթագործություն, պղնձագործություն, դարբնություն, նաեւ հանրակրթական առարկաներ՝ հայոց լեզու, ռուսաց լեզու, հայոց պատմություն, թվաբանություն, երկրաչափություն, հաշվապահություն, աշխարհագրություն, գեղագրություն, նկարչություն, երգեցողություն, կրոն: Այսպիսի ուսումնական հաստատությունը բացառիկ երեւույթ է եղել հայ իրականության մեջ: Ծախսերի մեծ մասը հոգացել է Ռ. Պատկանյանը, մյուսը՝ հոգաբարձուների իարհուրդը: Գործել է մինչեւ 1919 թ.:

Նոր Նախիջեւանի թեմական դպրոցը հիմնվել է 1875 թ.՝ որպես չորսդասյա հոգեւոր ուսումնարան: 1881 թ. վերածվել է թեմական հոգեւոր սեմինարիայի (երկու դասարան եւ մեկ նախակրթարան՝ 3 բաժանմունքով): 1886—1887 ուսումնական տարում բացվել է VI դասարանը: Դասավանդվել են կրոնագիտություն, հայոց լեզու, ռուսաց լեզու, լատիներեն, հունարեն, ֆրանսերեն, թվաբանություն, ընդհանուր աշխարհագրություն, ընդհանուր պատմություն, Ռուսաստանի պատմություն եւ աշխարհագրություն, բնագիտություն, տիեզերագիտություն եւ այլն: XIX դ. 1-ին քառորդում Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի ազգային միջնակարգ միակ դպրոցն էր: 1915 թ. ունեցել է 275 աշակերտ, 18 ուսուցիչ: Փակվել է 1920 թ.:

1882 թ. Մկրտիչ Քրիստափորի Գոգոյանի կտակի շահութատոկոսներով Նոր Նախիջեւանում հայ չքավոր օրիորդների համար բացվել է 4-դասյա դպրոց, որը 1910-ական թթ. դարձել է 7-դասյա եւ ստացել պետական գիմնազիայի կարգավիճակ: Դասավանդումը հայերեն էր: Դա Ռուսաստանի հայկական իգական միակ գիմնազիան էր, որն իրավունք էր տալիս ընդունվելու բարձրագույն ուսումնական հաստատություններ:



Հայկական գյուղերում եւս գործել են ծխական դպրոցներ: Մեծ Սալայում XVIII դ. վերջից գործել է հայկական եկեղեցի, XIX դ. կեսից՝ ծխական դպրոց: Թոփթիում եւս կար հայկական եկեղեցի: Սուլթան Սալայում գործել է ծխական դպրոց, պահպանվել է հայկական եկեղեցին:

1832 թ. Նոր Նախիջեւանի Ս. Խաչվանք է տեղափոխվել բանաստեղծ, մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ Հարություն վրդ. Ալամդարյանը, որը 1834 թ. դավադրաբար սպանվել է եւ թաղվել վանքի եկեղեցու առջեւ: 1862 թ. վանահայր Գաբրիել արք. Այվազյանը հիմնովին վերանորոգել է վանքի եկեղեցին, առաջնորդարանի շենքը, կառուցել երկհարկանի զանգակատունը (եկեղեցու արեւմտյան ճակատի առջեւ), դեպի այգին տանող քարե աստիճանները, վանքի աղբյուրի խոշոր ըմպելասրահը: 1865 թ. եկեղեցու առջեւ թաղվել է գրող, հրապարակախոս, փիլիսոփա, հայ քննադատության եւ գեղագիտության հիմնադիր Միքայել Նալբանդյանը:

Շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Վաթսունականների արձակագիրներ.
Ժամանակը եւ հերոսը

↩ *էջ 5, 6*

Ահա մոտավորապես հերոսների, վիճակների, հարցադրումների այսպիսի ընդգրկման մեջ է ծավալվում Խալափյանի խոսքը:

«Պատը» վիպակում սիրո առանցքի շուրջ հեղինակը ներկայացնում է այսպիսի մի դրվագ. ծանոթ հավաքականությամբ հայկական մի բակ, իրար կապված հարեւաններ եւ մեջտեղում՝ սիրող մի զույգ, որին թվում է, թե ոչինչ չի խանգարում միասին լինելու համար, բայց որը, ի վերջո, չի հասնում իր նպատակին: Սերը չի մեռնում, բայց մաշվում է օրերի մեջ, հասարականում ու արժեզրկվում մարդկանց հայացքների ներքո, եւ նրանք, գտնելով ու կորցնելով իրենց սերը, ի վերջո, այն կորցնում են օրերի մեջ: Սիրո հերթական մի «Տաղտկալի, ձանձրալի պատմություն», ինչը, սակայն, գալիս է բացահայտելու սիրո հարաբերության, մարդկանց կապի այսօրվա պատկերը, որ ոչ «Ռոմեո եւ Ջուլիետ» է, ոչ «Նամուս»՝ իր Սուսան ու Սեյրանով, այլ այդ հարաբերությունների առկա տարբերակ՝ օրվա քմայքներով, վիճակներով ու հարաբերություններով: Այս նորօրյա սիրո մեջ շերտերը շատ են. մի կողմից՝ կուսական ու ազնիվ զգացմունքներ, այդ զգացմունքներից դրդված արարքներ, մյուս կողմից՝ շինծու անտարբերություն, կորչող, ձեռքից թռչող սիրո հանդեպ ներքին բուռն տագնապների բացակայություն եւ հոգեկան հզոր կրքերի վերացում: Զգացմունքի լրիվ ապրման պակասն էլ հերոսներին ստիպում է տեղի տալ կյանքի թեթեւ հարվածներին, չցավել հոգեկան արժեքների կորստի համար եւ առանց հոգեբանական ցնցումների կորցնել ամենաթանկն ու նվիրականը:

Այս կարգի հերոսների կերպարներն այլ տեսք ու նկարագիր ունեն հաջորդ՝ «Ձեր դիմանկարը» վիպակում:

Վիպակն աչքի է ընկնում կյանքի չվարագուրված մերկության պատկերումով, ամեն ինչ դիտվում է այնպես, ինչպես կա՝ մերկ, առանց գունազարդումների, առանց մարդկանց հարաբերությունների մեջ թանձրացած մակերեսային տպավորությունների, առանց հեշտ պերճանքի:

Կյանքի ընդգրկման ժամանակահատվածը երկար է՝ ուսանողական տարիներից մինչեւ աշխատանք, ամուսնություն, ընտանիք: Հիմնական իմաստը, որ զարգացվում է՝ ուսանողական շրջանում սիրո եւ հետաքրքրությունների որոնումն է, ինչին հաջորդում է կյանքի վիճակների, հարաբերությունների կայունացումը՝ աշխատանքի են անցնում, ընտանիք են կազմում: Իսկ հետո սկսվում է կարուսելը (այդպես էլ վերնագրված է գործի երրորդ մասը): Կարուսել, այսինքն՝ ամեն ինչ սկսում է ամեն օր նույնությամբ կրկնվել. ձանձրույթը գրոհում է եւ ծանր նստում մարդկանց երազանքների ու չիրականացված բոլոր ձգտումների վրա: Հետզհետե կյանքը կորցնում է իր անրջային կապույտը: Մարդիկ ներանձնանում են, փորձում ճշտել իրենց կյանքի իմաստը. այս ընթացքում հասունանում ու ձեւավորվում է սպասվող միտքը. «Այս ո՞վ է իմ մեջ անընդհատ փնտրում ինչ-որ մեկին»: Հերոսուհիներից մեկի՝ Արփենիկի մեջ ծագած այս հոգեվերլուծական հարցադրումն ամբողջությամբ կարող է վերաբերել վիպակի ամեն մի գործող անձի: Այս ձեւակերպմամբ կարելի է բաց անել հերոսներից ամեն մեկի էության փակագծերը: Դրանք մարդիկ են, ովքեր որոնում են իրենք իրենց եւ փորձում ճիշտ գույներ ընտրել իրենց դիմանկարի համար: Բայց երբ, արդեն որերորդ անգամ, հնչում է հին, մաշված ձայնապնակի երգը՝ «...եւ վերադարձնելով ձեր դիմանկարը...», մարդիկ տհաճություն են զգում, որովհետեւ այդ դիմանկարը չի համապատասխանում իրենց երազանքին, այդ դիմանկարն այն չէ, ինչ իրենք կցանկանային, որ լիներ: Այդ դիմանկարը թերի է, իսկ հոգու մեջ, ներսում այն ավելի կատարյալ էր: Այդ հերոսներն իրենք իրենց մեջ որոնում են այդ տեսլական ամբողջությունը, ցանկանում իրենց հոգեկան ներքին շարժումները դարձնել իրականություն: Սակայն պատրանքն անէանում է իրական կյանքի ոլորտներում եւ վերածվում գորշ ու ձանձրալի օրերի շարանի, որոնք իրենց մեջ չեն կրում երազի ոչ մի պատառիկ եւ անուրջի ոչ մի ծվեն: Առօրյա կյանքն ունի իր օրենքները. մարդկանց հոգեկան ներքին հարստությունից շատ քիչ բան է իրագործվում, ինչի համար էլ աստիճանաբար նրանց մեջ կուտակվում է դժգոհության ու ձանձրույթի նստվածք, ինչը դառնում է ոչ թե ապրում, տարերք, ստեղծագործություն, այլ կարուսել. նույն շրջագծով պտտվող վիճակների, հարաբերությունների շարան: Թռիչքը դառնում է շրջապտույտ, շրջապտույտը՝ տեղքայլ:

Այս գործում շարունակվող սերնդային փոխհարաբերության հարցը հանգում է կյանքի նոր պատկերացման եւ հին պատկերացման հակադրության: Հեղինակն ստեղծում է «բրածո» կերպարներ, որոնք ցանկանում են իրենց ապրած օրերի կնիքը դնել նաեւ մյուսների վրա՝ չմտածելով, ավելի ճիշտ՝ չցանկանալով մտածել, որ դիմացինը ձգտում է ունենալ իր սեփական օրը: Սակայն այս հակադրությունն ընդհանուր առմամբ Խալափյանի ստեղծագործության մեջ մնում է սոսկ արտաքին միջամտություն եւ իր մեջ հասունացնում առճակատման հոգեբանական ոչ հիմնավոր նախադրյալներ:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՐԿ ԿՈՌԼԵՐ

ԽԱՉՅԱԼ ՉԱՐԱԳՈՐԾԸ

↩ *էջ 4, 6*

Բայց մասնակից կլինե՞նք դրան: Ահա տագնապահարույց խնդիրը: Ռաբբի Jochanan ben Zakkai-ն, որ վախճանվել է Հիսուս Քրիստոսից 80 տարի հետո, լաց էր լինում՝ իր հոգեվարքի մահճին պառկած: Իր աշակերտներին, որոնք ուզում էին իմանալ իր դառնության պատճառը, նա պատասպանում է. «Իմ առաջ բացվում է երկու ճանապարհ. մեկը տանում է դրախտ, մյուսը՝ դժոխք, ու ես չգիտեմ, թե որ ճանապարհով ինձ կասեն, որ գնամ: Մի՞թե դա առիթ չէ արտասվելու համար»: Միայն Աստծու ողորմածությունն է որոշում: Բայց ոչ ոք չի կարող այն իմանալ: Ահա ինչու մեր ժամանակաշրջանի գրվածքներում գտնում ենք ամենաշվար անվստահության արտահայտություններ...

Այդ հետին պլանին հակադրենք Հիսուսի խոսքը. «Ես կլինեմ դրախտում»: Ո՛չ կասկած կա, ոչ տատանում: Ո՛չ՝ «գուցե», ոչ էլ՝ «հավանաբար»: Ամեն ինչ հստակ է, գործը՝ որոշված: Մեռնելով՝ Հիսուս գիտե, որ ինքն ապրելու է: Այդ վստահությունն արտահայտում է իր իսկապես Քրիստոս լինելը: Ռաբբին արտասվում էր: Քրիստոս ցնծում է:

Այդ վստահությունն իր հետ բերում է մեկ այլ վստահություն: «Ես կլինեմ այնտեղ, ու դու կլինես այնտեղ ինձ հետ»: Հիսուս ոչ միայն գիտե, որ ինքը հաղթելու է մահին, այլեւ խոստանում է հաղթանակ իր կողքի խաչվածին: Հիսուսը տնօրինում է հավիտենական կյանքը: Նա բաշխում է այդ կյանքը: Այդ պարգեւն առանց պայմանի է: Այստեղ եւս որեւէ վերապահում բացառվում է: «Եթե» ու «այն դեպքում, երբ» բառերը բացակայում են: Նախադասությունն իր հստակությամբ կասկածի ոչ մի տեղ չի թողնում: Միայն մեկ լուծում կա նրա համար, ով լսում է նրան, պետք է ընդունի դա եւ ուրախանա դրանով:

Քիչ կարեւոր է այն, թե «դրախտ» բառը նկարագրում է փրկության վերջնական ու անմիջական վա՞յրը, թե՞ ներշնչում է մահվան ու վերջնական դատաստանի միջեւ միջանկյալ դրության գաղափարը: Այստեղ Հիսուս մեռածների դրության մասին ինչ-որ դաս չի տալիս: Նրա համար բավական է պատասխանել մարդու խնդրանքին. «Դու կլինես ինձ հետ, Կենդանի, քանզի ապրել ինձ հետ մահվանից հետո, նշանակում է լինել լիարժեք երջանկության մեջ»:

Բայց ո՞ւմ է Հիսուս կյանքի իրավունք շնորհում: Մեր զելտը հրեշտակ չէ: Մի խոնարհ խոստովանությամբ նա պատմում է իր անցյալի մասին. նրա համար խաչն արդարացված է. կատարված սխալներն ու բռնարարքներն արժանի են անեծքի: Արդ, այդ մարդուն, որն ընդունում է, որ ինքն արժանի է սարսափելի տանջանքների, Հիսուս երաշխավորում է հավիտենական կյանք: «Մարդու Որդին երկրի վրա ունի մեղքերը ներելու կարողություն», — ասում է Հիսուս: Ահա թե ինչու երկրի վրա նա կարողություն ունի դրախտ խոստանալու: Հիսուս կարող է այդպես խոսել այդ մեղավորի հետ, քանզի նա կրում է իր մեղքը Խաչի վրա:

Այդ տեսանկյունից պետք է հասկանալ «այսօր» բառը, որը հաճախ շփոթեցրել է մեկնիչներին: «Այդ ինչպե՞ս է,— ասում են նրանք,— նա խոսում այսօրվա մասին, չէ՞ որ Քրիստոս հարություն է առնում միայն երեք օր հետո»: Դա ճիշտ է: Բայց չարագործի համար գործածված «այսօր» բառը ճշգրիտ չէ. նա չի մեռնելու այսօր: Հրեական օրն ավարտվում է երեկոյան: Եթե ջարդել էին մարդու ոտքերը, նշանակում է՝ երեկոյան նա դեռեւս ողջ էր: Հիսուս գիտե, որ այդ մարդն ավելի շատ ֆիզիկական պաշարներ ունի, քան ինքը: Նա տեսնում է, որ նա կդիմանա մինչեւ հաջորդ օրը: Բայց նա գիտե նաեւ, որ ինքն ուժասպառ է ու զգում է, որ այլեւս երկար չի դիմանա: Նա գիտե, որ իր մահն այսօր է լինելու: Այսպիսով՝ ժամանակային մակբայը վերաբերում է Հիսուսի մահվանը: Ես քեզ ասում եմ, որ այսօր մեռնելով՝ ապրելու եմ: Եվ որովհետեւ մեռնում եմ այսօր, իմ վերահաս մահվան շնորհիվ, դու ինձ հետ կլինես հավիտենական կյանքում: Քո ապագա կյանքը կապված է իմ ներկա մահվանը: Իմ մահը քեզ կյանք է տալիս: Իմ մահն սպանում է քո մահը:



Անդրեյ Միրոնով. «Խելամիտ ավազակը»

Պատմության մի ողջ ժամանակահատվածում քրիստոնեական արվեստի պայմանականություններն ստիպել են գեղանկարիչներին Քրիստոսի խաչը նկարել կանաչ գույնով: Դրանով նրանք ուզում էին ասել, որ Խաչը կյանք ընձեռող փայտ է: Անմեղ Քրիստոս այնտեղ իր վրա կրեց մեր բաժին անեծքը: Ահա ինչու նա մեր հարությունն է ու մեր կյանքը: Հավատալ հաղթանակած Խաչյալին, նշանակում է ապրել անգամ մահվան մեջ:

Նա, ով նույն վստահությամբ հետեւել է այդ առաջին սրբի վերջին վայրկյաններին, այսուհետեւ Հիսուս Քրիստոսի խաչը միշտ տեսնելու է կանաչ գույնի:

Ֆրանսերենից թարգմանությունը՝
Գառնիկ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 17.11.2021 թ.
Տպաքանակը՝ 1225